

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/3

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ «ՍԱՐԱՆԴ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ՍԱՐԱՆԴ» ՍՊԸ կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ՝ կապված 2017թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը ուշ ներկայացնելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու հետ:

ՀՀ հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում «ՍԱՐԱՆԴ» ՍՊԸ կողմից բաց է թողնվել ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձանց գործողությունները վարչական կարգով բողոքարկելու ժամկետը: Այսպես, բողոքը վերաբերվում է 2017թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար լրացուցիչ հաշվարկված պարտավորությունը վերանայելուն: Մասնավորապես, 2017թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկն ընկերության կողմից ներկայացվել է 28.02.2018թ., որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվել է պարտավորություն: Տվյալ դեպքում, համապատասխան գործողությունը կատարվել է 28.02.2018թ. (որի մասին ընկերությանը պատշաճ ծանուցվել է), սակայն դրա դեմ բողոքը բերվել է 14.06.2018թ.:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՍԱՐԱՆԴ» ՍՊԸ դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:
Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԵՂՅԱՆ